

## Հրանուշ ՉԱԲՅԱՆ

### ԲԱՅԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՄԵՉ

Լեզվի քերականական կարգերի փոփոխությունները պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցող երևույթներ են: Այսպես, մեր լեզվի զարգացման տարբեր շրջաններում զգալի թվով բայեր ունեցել են սեռային տեղաշարժեր: Դրանք կատարվել են զանազան պատճառներով, տեղի են ունեցել իմաստային փոփոխություններ, որոնց հիման վրա էլ առաջ են եկել խնդրառական համապատասխան փոփոխություններ, կամ տեղի են ունեցել քերականական երանգային փոփոխություններ, որոնք ազդել են բայի սեռի վրա:

Բայերի խնդրառությանը, մասնավորապես խնդրառական տեղաշարժերին, ինչպես նաև բայի սեռին, մասնավորապես սեռային զուգահեռներին և կրկնասեռությանը վերաբերող հարցերին անդրադարձել են մի շարք հայ լեզվաբաններ, որոնք որպես կանոն կանգ են առել լեզվի պատմական զարգացման որևէ մեկ շրջանի վրա միայն:<sup>1</sup> Մասնակի դեպքերում հեղինակները անդրադարձել են գրաբարին՝ խնդրառական տեղաշարժերի հետ կապված այս կամ այն հարցը հիմնավորելու համար: Մեր նպատակն է վերոհիշյալ քերականական իրողությունների ուսումնասիրությունը կատարել հայերենի պատմական զարգացման ֆոնի վրա՝ հավասարապես կարևորելով գրական հայոց լեզվի պատմական զարգացման բոլոր երեք շրջանները:

Բայի սեռային պատկանելության մեջ կատարված տեղաշարժերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաբարը հարուստ է կրկնասեռ բայերով, երբ ըստ իրենց արտահայտած գործողության բնույթի՝ բայերը պահանջում են երբեմն ուղիղ, երբեմն էլ անուղղակի խնդիր լրացումներ (ընդ որում, դա ոչ միշտ է կապված զուգահեռ լծորդությունների հետ): Միջին հայերենում զգալիորեն պակասում են կրկնասեռ բայերը, իսկ ժամանակակից հայերենում դրանց թիվը խիստ սահմանափակ է բայական հարուստ բառապաշարի մեծ թիվ կազմող միասեռ բայերի համեմատ:

Ուսումնասիրել ենք գրաբարում կրկնասեռ (այդ թվում նաև սեռային զուգահեռություն ունեցող) մոտ 50 բայերի մինչև արդի հայերեն անցած ուղին: Այս բայերից միայն 10-ն է արդի հայերենում պահպանել իր կրկնասեռությունը, այսինքն՝ գրաբարում կրկնասեռ կամ սեռային զուգահեռություն ունեցող 40 բայ այսօր միասեռ է:

Սեռային փոխանցումները հիմնականում կատարվել են երկու ուղղությամբ. կրկնասեռությունից՝ չեզոք սեռի և կրկնասեռությունից՝ ներգործական սեռի: Իհարկե, զերակշռում են կրկնասեռությունից չեզոք սեռի անցման դեպքերը (50-ից 22-ը, իսկ 50-ից 13-ը՝ կրկնասեռությունից՝ ներգործական սեռի): Դիտարկված 50 բայերից 2-ը (գրաբարում միասեռ) արդի հայերենում դարձել են կրկնասեռ՝ գրաբարյան իմաստների լրիվ փոփոխության հետևանքով: Եթե ի մի բերենք ամբողջ պատկերը, դժվար չի լինի նկատել, որ բայի սեռային անցումները ամբողջացնում են հայերենի քերականական համակարգի զարգացման ընդհանուր պատկերը և, կարծում ենք, ուղղված են քերականական համակարգի հստակեցմանն ու միօրինականացմանը: Սեռային տեղաշարժերի ժամանակ գրաբարից արդի հայերեն ընկած երկարատև ուղին անցնելիս շատ բայեր կամ կորցրել են գրաբարում առանձին սեռային պատկանելությամբ արտահայտվող նշանակությունը, կամ նշված նշանակությունն արտահայտել են մոտ բայաձևով: Ինչպես խոսքիմասային իմաստափոխության դեպքերը քննելիս, այնպես

<sup>1</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների, հ. 1, Եր., 1952, էջ 24-25: Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 2, Եր., 1953: Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 402-403: Վ. Քոչյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1963: Ն. Պատմասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1968: Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1968: Գ. Գարեգինյան, Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Եր., էջ 306-318: Մ. Ասատրյան, Բայի սեռը ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 195-199: Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1988:*

էլ այս պարագայում պետք է կարևորել լեզվի պատմական զարգացման երկրորդ՝ միջինհայերենյան շրջանը, քանի որ շատ բայեր հենց միջին հայերենում են կորցրել կրկնաստեռությունը և արդեն որպես միաստե բայ՝ անցել են լեզվի զարգացման հաջորդ փուլ (սաստակել, հաճել, վախճանել և այլն): Այդ են վկայում գրաբարի, միջին հայերենի և արդի հայերենի բացատրական բառարանների ուսումնասիրությունները<sup>2</sup>:

**Շողոպրել** բայը արդի հայերենում կորցրել է գրաբարյան ներգործական սեռի նշանակությունները՝ *կորզել, պոկել, խլել, ազատել* և արդի հայերենի բառապաշար է մուտք գործել որպես չեզոք սեռի բայ՝ հենց գրաբարյան չեզոք սեռի իմաստներով՝ *պոկ գալ, վտանգից ազատվել, փախչել*:

**Վարանել** բայը այսօր արդեն չունի գրաբարյան, *1.չորս կողմից պաշարել, նեղը գցել, 2. հոգ տանելով ճար անել* իմաստները: Այսօր չեզոք սեռի բայ է՝ *երկնտանքի մեջ ընկնել, անվստահություն ունենալ* բայիմաստներով: Պետք է նշել, որ արդի հայերենում չեն օգտագործվում «վարանել» բայի գրաբարյան չեզոք սեռի որոշ նշանակություններ, ինչպիսիք են՝ *1. այս ու այն կողմ քափառել, 2. հալածվել, 3. դարանակալ լինել, 4. բռնվել, պաշարվել* իմաստները:

**Աշակերտել** բայը գրաբարում զուգահեռաբար հանդես էր գալիս ներգործական և չեզոք սեռերով: Գրաբարում բայն ունեցել է *կրթել, աշակերտ դարձնել, ուսուցանել* նշանակությունները՝ այժմյան մեր գրական հայերենում գործածվող հայտնի նշանակություններին զուգահեռ: Հենց թվարկված իմաստներն էլ արտահայտել են համապատասխան անցողիկության զարգացման, և բայն օգտագործվել է նաև ներգործական սեռով: Այսօր բայն հանդես է գալիս միմիայն չեզոք սեռով, քանի որ այդ իմաստները նոր գրական լեզվում այլևս չկան: Փաստորեն, այս և բազմաթիվ այլ բայեր (հոսել, ճակատել, հապաղել, հառել, բարգավաճել, ապավինել, ծագել և այլն) լծորդի փոփոխությամբ (ե-ի) գործածվել են թե՛ ներգործական, թե՛ չեզոք սեռի իմաստներով: Մեռային զուգահեռությունից զատ սեռային անցումը հատուկ է նաև կրկնաստե բայերին, այսինքն՝ բայերի այն խմբին, որոնք բառարանային միավոր հանդիսացող բայական մի ընդհանուր բառույթի մեջ այս կամ այն չափով պարունակում են երկու սեռի՝ ներգործականի և չեզոքի հատկանիշներ:

**Ժամանել** բայը գրաբարում՝ նր\* է՝ *1. ստանալ, 2. ձեռք բերել, չք է՝ 1. հասնել, 2. կանխել, փութալ, առաջ տեղ հասնել, 3. կարողանալ, ձեռնահաս լինել, 4. հավասարվել*: Եւ վաղու լուեալ զբօթն՝ ոչ ինչ *ժամանեաց* հասանել յամբով գործոյն պատերազմի իրացն պատրաստութեան (Ագ.): Յարգեցեր զհողեղէն բնութիւնս մեր ուրախ եմ, զի *ժամանեցից* զկնի դատերն իմոյ (Ագ, 110): Եւ զունդն որ էր ի կողմանս Ատրպատականի՝ ոչ *ժամանեաց* ձեռն տալ ի միջոց աշխարհին (Եղ., 97): Չի երթալն իսկ ոչ *ժամանէ* ի տեղի պատուհասին իւրոյ (Եղ. 206): Ելցէ ի խորոց սրտի զգայութեանց սենեկիս՝ Վաղվաղակի *ժամանել* առ քեզ՝ Կամաւորական նուէր բանական զոհիս (ԳՆՄՈ. Ս. ա., 246):

Արդի հայերենում չեզոք սեռի բայ է՝ *1 հասնել, գալ մի տեղ, 2 (հնց) վրա հասնել, 3. (հնց) հասնել* մի բանի նշանակություններով: Բայը կորցրել է ոչ միայն ներգործական սեռի նշանակությունը, այլև չեզոք սեռի բազմաթիվ իմաստներ: Միջին հայերենում բայն արդեն կորցրել է գրաբարյան կրկնաստեռությունը և ունի հենց արդիհայերենյան սեռն ու նշանակությունը: «Ժամանել»<sup>3</sup>-չ. *ժամանել, վրա հասնել*: Ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա, որ *վրա հասնել* նշանակությունն արդիհայերենի համար արդեն հնացած է: Բայց չէ մենակ *ժամանէ* մահն, հանց որ դեռ կինն չլինի զիտեցել: Այլ թէ կանխեալ *ժամանէին*, յԱնգերծ տեղիսն փախչէին (ՆԸ, 60):

**Կարաւել** բայը գրաբարում՝ չք է նր է՝ *1 պարել. ուստոտել, թռչկոտել, 2 ծաղրի առարկա դարձնել, 3 վրա հարձակվել, 4 խոցել, լլկել* նշանակություններն ունի, իսկ արդի հայերենում չեզոք սեռի բայ է՝ *ուստոտել, պարել* նշանակությամբ: Նույնն է նաև

<sup>2</sup> Նոր հայկազյան բառարան (այսուհետև՝ ՆՀԲ): Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Եր., 2000: Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 1987, 1992 (այսուհետև՝ ՄՀԲ): Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

\* Ծանոթագրություն. նր - ներգործական սեռի բայ, չք - չեզոք սեռի բայ:

<sup>3</sup> Ռ. Ղ ա զ ա բ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, ՄՀԲ, հ. Ա, Եր., 1987:

միջին հայերենում: Ծովածփեղին իր մահաբեր աչօքն, Կայթեր կաքաւէր թմրկահարիկ աղջիկն (ՀՂԲ, 206): Ուտիք վազեալ կաքաւէին (ՆՇ, 80):

Քարբառել բայը գրաբարում կրկնաստե է՝ 1. արտաբերել, խոսել, 2. ձայն տալ, կանչել իմաստներով: ...յաճախեին այսուհետև զառաւելագոյնս քարբառելով (Ագաթ., 355): Արդի հայերենում չեզոք սեռի բայ է խոսել, մի բան ասել նշանակությամբ: Միջին հայերենում էլ բայը գերազանցապես հանդես է գալիս հենց արդիհայերենյան սեռով և նշանակությամբ:

Ճամարտակել բայը գրաբարում նշանակել է (նր, չր) 1. մեծաբանել, ճոռոմաբանել, մեծ-մեծ խոսել, 2. առաջ նետվել, հայարտությամբ քայլել, իսկ արդի հայերենում չեզոք սեռի բայ է: Ինչպես վերևում նշել ենք, որոշ բայեր էլ գրաբարյան այս կամ այն սեռի նշանակությունը կորցրել են ոչ թե կրկնաստեության հետ, այլ այդ իմաստի համար արդի հայերենում ձեռք են բերել նոր բառաձև:

Յաջողել կրկնաստե բայը գրաբարում նր է՝ 1. ընդատաջել, հաջողեցնել, 2. ներգործել, ազդել: Եւ տեր յաջողեր նոցա նշանօք (Եղ., 19): Եւ եթէ միստվս յաջողեսցէ մեջ Աստուած, գնալ և լնուլ զկարօտութիւն մնացելոցն (Եղ., 242) և չր է՝ յաջողիմ- հաջողութիւն գտնել, առաջ գնալ իմաստներով ...սպա և յաթոնն Գաւթի մտոցի և զարքայութիւն նորա յաջողեսցէ (Ագաթ., 200): Պետք է նշել, որ միջին հայերենում բայն արդեն միաստե է, «աջողիլ»-չ. հաջողվել, իրագործվել, գլուխ գալ: Մէկի հալալն կորուսի, Մէկին հարամն յաջողի (Ֆր., 21):

Կանգնել բայը գրաբարում՝ նր է՝ կանգնեցնել, շտկել, չր է՝ կանգնել, կանգ առնել իմաստներով: ...հաւանեցուցին մեհեանս շինել և պատկերս կանգնել և երկիր պազանել (Ագաթ., 34): Եւ կանգնէր սեղանս կործանեալս (Բուգ., 116), Եւ կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրոց (Եղ., 408), Այսօր չեզոք սեռի բայ է, իսկ նր իմաստի համար ունի նոր բառաձև՝ «կանգնեցնել»:

Հետաքրքիր է բայի պատկերը միջին հայերենում, ուր խիստ ակնառու է սեռային անցումը. «կանկնել» չր (կանգնել)<sup>4</sup> «Նա տանուտէրն ի վեր ելնէ, շիշանի ձեռն ու կանկնէ (ՄԽՏ, 342), նր «կանգնեցնել», «Եւ հանեալ կանկնեաց գնայ և սկսաւ ջուր արկանել ի մտա (ՎԱԱ, 95), Առանձին գործածությամբ հանդիպում է «կանկնիլ»<sup>5</sup> չեզոք սեռի բայը՝ կանգնել, կանգ առնել նշանակությամբ: Երբ հեծնի մա պահ մի կանկնի (Բուգ., 271): Գործածության մեջ է մտել մաս «կանկնեցնել» կամ «կանկնեցուցանել» բայը՝ կանգնեցնել նշանակությամբ:

Սեռային փոխանցումների երկրորդ ուղղության (կրկնաստեությունից՝ ներգործական սեռի) դեպքում էլ չեզոք սեռի կորստի հետ կորցրել են իրենց արտահայտած այս կամ այն նշանակությունը (օրինակ կրթել բայի 1. ձգտել դեպի մի բանի, 2. ջանալ, մի բանի հետամտել: Թէպէտ և ժողովեցան կազմեցան գունդ եղեն, պատրաստութեամբ զիւտ կրթէին Վարազայ, ոչ ինչ կարացին հասանել (Բուգ., 84), 3. նեղ տեղից բռնությամբ անցնել. Ձի դիմ է մա ընդ տեղի ինչ նեղածերպ վայրագ, և ընդ կրթելն կեղևէ զապականեալ մորթն ծերացեալ մարմնոյն (Ագաթ., 303) նշանակությունները: Պետք է նշել, որ արդի հայերենը չի պահպանել մաս «կրթել» բայի ներգործական սեռի նշանակությունների մեծ մասը՝ պահպանելով միայն սովորեցնել, ուսուցանել իմաստները: Այս փոփոխությունն առկա է արդեն միջին հայերենում. Կրթէր ի պահս և ի յաղոթս Վարուք մաքրէր զգնացս երկրի. (ՀՂԲ, 205): Նույն ճանապարհով գործածությունից դուրս է եկել «կողոպտել» բայի չեզոք սեռի նշանակությունը՝ քայքայվել (դիակը), մերկանալ մսից. ...ոք հուպ չիշխէր երթալ, մինչև նեխեցան մարմինք նոցա և կողոպտեցան (Բուգ., 70): Նույն կերպ՝ «բանալ» բայի ծղել, «յառել» բայի՝ ձգվել, մեկնվել, «փարատել» բայի՝ հեռանալ, վերանալ նշանակությունները և այլն: Որոշ բայեր չեզոք սեռի արտահայտած նշանակության համար արդի հայերենում ձեռք են բերել նոր բանաձև. օրինակ «նեղել» բայը գրաբարում նր.՝ 1. չարչարել, տանջել, նեղել, 2. սեղմել, նեղ դարձնել 3. շարժել, հորդորել: Բազում անգամ ի բանդս և ի կապս տանջանօք նեղէր զնա (Ագաթ., 30), չր. 1. նեղություն կրել, նեղվել, 2. խոթվել, 3. նեղ դառնալ, փոքրանալ. Որպէս տարապարտուց նեղեցան ի հայրենի օրինացն յետս կալ

<sup>4</sup> Ռ.Ղ ա գ ա բ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, ՄՀԲ, հ. Ա, էջ 382:

<sup>5</sup> Նույնը:

(Եղ., 100): Եւ մինչ դեռ յայսմ մտաց խորհրդի էր յանձն իւր և *նեղէր* ի միտս իւր (ն.տ., 153): նք Մի՛ արժանս և աւելի տարապայմանս հարկօք *նեղել*, քան զչափն (Բուզ., 120): Արդի հայերենում «նեղելը» նք է, իսկ չեզոք սեռի նշանակության համար ունի առանձին բառաձև՝ «նեղվել»: Քերականական իմաստափոխության ենթարկված ուրոշ բայեր ունեն մի առանձնահատկություն, արդի հայերենում միասեռ լինելով հանդերձ՝ միավորել են գրաբարում օգտագործելի երկու սեռերի իմաստներն էլ: Օրինակ՝ «պնդել» կրկնասեռ բայը գրաբարում նշանակել է նք է՝ *ամրացնել, քաջալերել, հաստատել, կապկպել*. *Պնդեա՛* իբրև այր զմէջս քո, և մի՛ համարիր այլազգ ինչ երևեալ քեզ (Ազաթ., 169): Խրատ եղին, *պնդեցին* և արարին զամենեսեան զինուոր (Եղ., 69): չք է՝ *համատել, օգնել, վազել*. Նա ևս *պնդէր* և ասէր ... (Ազաթ., 100): Երևեալ տեսիլ հրեշտակի, զի մի իշխեսցեն ինչ *պնդել* յամատել վասն այնր (ն.տ., 403): Արդի հայերենում «պնդելը» նք է՝ բայց միևնույն ժամանակ նշանակում է թե՛ *հաստատել*, թե՛ *քաջալերել*, թե՛ *համատել*: Ակներև է, որ արդի հայերենը չի պահպանել գրաբարյան չեզոք սեռի *օգնել, վազել* իմաստները (վերջինս պահպանվել է «հետապնդել» բայի կազմության մեջ): Արդի հայերենում օգտագործվում է չք «պնդել» բայը՝ *պնդանալ* նշանակությամբ, բայց բացառապես՝ խոսակցական ոճում: Հետաքրքիր է բայի գործածությունը միջին հայերենում. «պնտել»<sup>6</sup> նք է՝ *պնդացնել, ամրացնել* Բեկմամբ բարձիցն և յօրածին զիսս *պնտեա* յողո-յողո մարմին (ՆԸ, 197), չք է՝ *պնդանալ, ամրանալ* իմաստով: Ինչպես տեսնում ենք, միջին հայերենն արդեն կորցրել է գրաբարյան չեզոք սեռի իմաստները և, ինչպես արդի հայերենը, որպես առանձին չեզոք սեռի բայաձև, ունի «պնդանալ» ձևը. *պնդնալ*<sup>7</sup> - չ պնդանալ: Պետք է ենթադրել, որ հենց այդ բայաձևի գուգահեռ գործածությունը աստիճանաբար դուրս է մղել «պնդել» բայի միջինհայերենյան չեզոք սեռի գործածությունները, և արդի հայերենն ընդունել է «պընդել» նք և «պնդանալ» չեզոք սեռի բայերը: Նույնը պետք է ասել, «փարել» բայի մասին, որն այսօր նք լինելով հանդերձ՝ միավորել է գրաբարյան երկու սեռերի իմաստներն էլ (նք՝ *պատել, ամփոփել, չորս կողմը պատել, չք՝ փարվել, փաթաթվել, շրջվել*):

*Տազմապել* բայը միավորել է գրաբարյան երկու սեռերի իմաստները՝ այսօր դառնալով միասեռ (նք՝ *նեղը զցել, խուճասյի մատնել, չք՝ նեղվել, խուճասյի մատնրվել*): Պետք է կարևորել այն փաստը, որ կրկնասեռության հարցը գրաբարում միշտ չէ, որ կապված է եղել Ե-Ի գուգահեռ լծորդությունների գոյության, իսկ սեռային տեղաշարժերն էլ՝ այդ լծորդությունների միավորման հետ: Այս երևույթն ավելի լայն ընդգրկում ունի և, կարծում ենք, կապված է մի կարևոր ու ակնառու իրողության հետ: Լեզվի պատմական զարգացման նախորդ շրջանների հետ համեմատած՝ արդի հայերենը բառերի խոսքիմասային իմաստների և քերականական հատկանիշների տարբերումն հարցում ձգտում է միօրինակության և հստակության: Քերականական իմաստափոխությունների բնույթն էլ այդ է վկայում: Ինչպես նշել ենք, այսօր հայերենի բառապաշարում քիչ են թե՛ խոսքիմասային բազմիմաստություն ունեցող բառերը, թե՛ կրկնասեռ բայերը, իսկ սա պատահականություն կամ զուգահիշություն լինել չի կարող: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրկնասեռությունը որպես քերականական իրողություն դրսևորվել է նաև այլ լծորդություններում, և այդ բայերն էլ անցել են սեռային անցումների միանգամայն նույն ուղին (օր. «յաւելում» բայը գրաբարում կրկնասեռ է. նք է՝ *ավելացնել, աճեցնել, առատացնել, հավաքել, ամփոփել, կրկնել* և չք է՝ *ավելանալ* իմաստներով, արդի հայերենում նք է՝ «հավելել»- *ավելացնել* նշանակությամբ: Բայը կրկնասեռ չէ արդեն միջին հայերենում: Առանձին գործածություն ունեն «յաւելանիլ», «յաւելնալ», «աւելնալ» և «յաւելցնել» կամ «յաւելցուցանել» բայաձևերը): Սեռային անցում են ապրել նաև Ա լծորդության ենթարկվող շատ բայեր:

*Մերկանալ* բայը գրաբարում հասարակ սեռի բայ է՝ 1. *վրայից հանել, մերկացնել, 2 բաց անել, հայտնել 3. հանվել, մերկ դառնալ, 4. գրկվել մի բանից, 5. բացվել, հայտնի դառնալ* իմաստներով: Իսկ նոքա վասն նորին պատճառանաց խաբեալք՝ ճաշակեցին, և անցեալ զպատուիրանան յաստուածակերպ փառացն *մերկացան* (Ազաթ., 146): Նորոգել հրամայէ, և *մերկանալ* զհին մարդկութիւնս ի ձեռն մկրտութեան

<sup>6</sup> Ռ. Ղ ա զ ա բ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, ՄՀԲ, հ. Բ, Եր., 1992, էջ 283:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 282:

աւագանին (ն.տ., 223): Արդի հայերենում չք է՝ *1. շորերը հանել, 2. վրայի զենքերը հանել, 3. մի բանից զրկվել, պատյանից հանվել* հիմնական և մի քանի փոխաբերական նշանակություններով: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բայը միասեռ (չեզոք) բայ է արդեն միջին հայերենում՝ *մերկանալ, պատյանից հանվել* իմաստներով<sup>8</sup>: Սուր հրեշտակին անդ *մերկենաց* (ՆՄ, 114): Թե՛ միջին, թե՛ արդի հայերենում կա նաև «մերկացնել» բայը:

Բանալ բայը գրաբարում կրկնասեռ է՝ *1 բացել, 2 ուղարկել, 3 ծղել*: Փրկել զամենեսեան ըմբռնեալս ի սատանայէ... և զխուլն *բանալ*, և համերց տալ, խոսել (Ազաթ., 227): Բացեալ են աւանիկ դրունք երկնից, *բացան* և ջուրք (ն.տ., 378): Արդի հայերենում նք է՝ 28 նշանակություններով (կա նաև «բացվել» ձևը): Նույնն է միջին հայերենում, ուր «բանալ» *Բանամ* զշրթունս, բարբառիմ լեզուսու (ՀԳԲ, 22) նք-ի հետ զործածվում է նաև՝ Չարթնել է ու վեր ելել, Ու իջել դրոնակն է *բացել* (ՀՄՊՏ, 119) «բացուել»։ Վարդն աշխօշ ատեթ ունի, երբ արև տեսնու՝ *կու բացուի* (ն.տ., 223), ինչպես նաև «բացել» կրավորական ածանցի մախատիպն ունեցող ձևը. (Վարդն *բացաւ* մի՛ սիրեր... (ՀԳԲ, 50): Ակներև է, որ արդի հայերենում բայն ընդամենը ներկայանում է այստեղ արդեն մեծ տարածում ունեցող «վ» ածանցով՝ չեզոք սեռի իմաստով զործածվելիս: Նույնը պետք է ասել նաև Ա լծորդության պատկանող «հոգալ», «սգալ», «ողբալ» բայերի մասին, որոնք, սակայն, ի տարբերություն մախորդ բայերի, այսօր էլ են պահպանել գրաբարից եկող կրկնասեռությունը: Կրկնասեռությունից միասեռության անցած շատ բայեր դարերի ընթացքում կորցրել են ոչ միայն քերականական այդ հատկանիշը, այլև գրաբարյան բազմիմաստությունը: Պետք է նկատել, որ համակարգվել են նաև բառիմաստները. գրաբարում բազմիմաստ բառերը ունեն այնպիսի նշանակություններ, որոնք այսօրվա մեր լեզվամտածողությամբ համարյա կապ չունեն բառի բուն, հիմնական իմաստի հետ:

Թերևս, հայերենի պատմական զարգացման ընթացքում վերոհիշյալ իմաստները հենց հիմնական նշանակության հետ ունեցած չափազանց թույլ կապի պատճառով են աստիճանաբար մթազնել՝ ժամանակի ընթացքում լրիվ դուրս գալով զործածությունից: Երբեմն գրաբարյան բազմաթիվ նշանակություններից արդի հայերենը պահպանում է միայն մեկը, այն էլ՝ մասնակի իմաստափոխված: Օրինակ՝ «վճարել» կրկնասեռ բայը գրաբարում նշանակել է՝ *1. ավարտել, 2. վերջ տալ, վճռել, սահմանել 3. զլուխ բերել, իրագործել, կատարել, 4. բավարարել, հոգալ, 5. վախճանվել, 6. հատուցել, հատուցում ընդունել, 7. ազատել, 8. հեռանալ, բաժանվել*: Ուխտեմ և ոչ *վճարեմ* (ԳՆՄՈ, 196) երկիւղի տարեալ նոցա զդարմանսն և զպիտոյս նոցա *վճարեսցեսն* (Բուգ., 120): Եւ լուծեալ զարեանն *վճարեցաւ* (ն.տ., 156): Արդի հայերենում բայը կորցրել է գրաբարյան բազմիմաստությունը և ունի մեկ իմաստ՝ *դրամով հատուցել, վարձատրել, փոխհատուցել*: Պետք է նշել, որ միջին հայերենում բայի գրաբարյան նշանակությունները դեռևս շարունակում են գործածվել. օր.՝ Չոր աստանօր եմ յանգելոց, զԳիրս բանից *վրճարեղոց*, Ի փառս հօր արարելոց (ՆՇ, 104): Չի գործ ծածուկ մեքենային փոյթ և արագ *վրճարեցին* (ն.տ., 67): Բայց արդի հայերենյան նշանակությունը միջին հայերենում արդեն հանդիպում է և, թերևս, աստիճանաբար ավելի ու ավելի գործածական դառնալով՝ դուրս է մղում գրաբարյան իմաստները: Եւ երբ *վճառէ*, յայնժամ ազատե զիր տունն ի Յակոբէն (ԿԱ, 227): Նույնը պետք է ասել «հաստատել», «վառել» բայերի մասին: Ինչպես վերևում նշել ենք, շատ քիչ բայեր արդի հայերենում պահպանել են գրաբարից եկող կրկնասեռությունը: Դրանցից մի քանիսը կրկնասեռության հետ պահպանել են նաև գրաբարյան նշանակությունները (հոգալ, սգալ, ողբալ, վաստակել, սպասավորել, զերծանել (այսօր՝ զերծել) խոկալ, խոտորել և այլն): Կրկնեմք, որ նշված Ա լծորդության բայերը գրաբարում, ինչպես և այսօր, կրկնասեռ են, իսկ մյուսները չեզոք նշանակության իմաստն արտահայտել են լծորդի փոփոխությամբ: Այնուհանդերձ, այսօր կանգնած են քերականական մույն սանդղակի վրա, ինչն էլ մեկ անգամ ևս հաստատում է այն փաստը, որ լեզվական կանոնը, որին ենթարկվել են այս բայերը, ավելին է, քան լծորդությունների պատմական միավորումը: Կրկնասեռությունը արդի հայերենում պահպանած որոշ բայեր էլ

<sup>8</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, ՄՀԲ, հ. Բ, էջ 127:

գրաբարյան իմաստները ենթարկել են մասնակի փոփոխության. օրինակ «հաճախել» բայը գրաբարում ունի սեռային զուգահեռություն, ընդ որում, չեզոք սեռի նշանակությունն արտահայտվել է ինչպես լծորդի փոփոխությամբ, այնպես էլ՝ առանց դրա: Այսօր էլ, ինչպես նշեցինք, բայը կրկնասեռ է, բայց ունի հետևյալ իմաստները. նր՝ *հաճախակի դարձնել, շատացնել, չր՝ հաճախակի գնալ, շարունակակար այցելել*: Վերջին նշանակության գործածությունը արդեն միջին հայերենում նկատվում է: Որ միշտ առ իս *յաճախէին*, զԱյն, որ բարեաց մասունք էին (ՆԸ 68):

Գրաբարում կրկնասեռ է նաև «կարդալ» բայը.՝ *1. ծայնել, աղաղակել, կանչել, կոչել, օգնություն կանչել*. Եւ մեք զանուն Տեառն *կարդասցուք...* (Ագաթ., 101), ...յարգանդէ *կարդաց* զիս Տէր, և յորովայնէ մօր իմոյ կոչեաց զանուն իմ (ն.տ., 202), Եղիցի ամենայն որ *կարդացէ* զանուն Տեառն՝ կեցցէ (Ագաթ., 337), *2. մեծարել, 3. անվանել, անուն դնել* (Արդ ի ժամանակին յայնմիկ մի ոմն արդար գտեալ յարդարացեալ տոհմէն, որում Նոյ անուն *կարդացեալ*, (Ագաթ., 154)) *4. բարձրաձայն կարդալ, 5. կարդալ* (Զայս ասելով կարոզ *կարդայր* ի մեծի կարաւանին (Եղ., 22)): «Կարդալ» բայը արդի հայերենում էլ է կրկնասեռ, ուղղակի ապրել է իմաստների տեղաշարժ. այն այսօր չունի գրաբարյան առաջնային իմաստները. նշանակում է *ընթերցել, արտասանել, վերծանել, դասախոսել, գրուցել*: Ինչպես տեսնում ենք, իմաստների տեղաշարժն ակնհայտ է: Գրաբարում ավելի շատ գործածություն ունեցող իմաստները ժամանակի ընթացքում բայը կորցրել է, իսկ մյուս նշանակությունները անցել են արդի հայերենին՝ որպես «կարդալ» բայի հիմնական իմաստներ: Իհարկե, դրանց ավելացել են նոր, բայց բուն նշանակությանը մոտ իմաստներ, այդ թվում նաև՝ փոխարերական (*արտաքին նշաններից իմանալ, երգել, սովորել* և այլն): Վերոհիշյալ իրողության սկզբնավորումը ավելի քան ակնհայտ է միջին հայերենում:

*Կարդել* նր է՝ *կարդալ, ընթերցել* (Ով *կարդացէք*, յադօթս յիշեցէք (ԳՆՎԳ, 37) Գոշավանքի վիմագիր արձանագրություններից մեկում կարդում ենք, «Ով *կարդայք*, Ասագին երկար կենդանութիւն *խնդրեցէք*, (Դիվան, էջ 70): Նա երբ կարէ հանց բան սանել, Ով որ *կարդայ*, օրինէ զնա: Իհարկե, գրաբարյան նշանակությունները միջին հայերենում շարունակում են հանդիպել. Եւ վայ *կարդան* իւրեան անձին յատկական, (ՀՄՊՏ, 22): Այս իրողությունը միանգամայն բնական և օրինաչափ է, քանզի բայի իմաստի փոփոխությունը, ինչպես նաև իմաստափոխության ցանկացած տեսակ դարերի արդյունք է՝ կապված բառօգտագործման հատկապես խոսքային միջավայրի հետ: Հարցի պատմական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ճշտելու այդ գործընթացի ուղին: Ի դեպ, արդի հայերենյան ժողովրդական խոսքում կիրառելի *սովորել, ուսանել* նշանակությունները դարձյալ գալիս են միջին հայերենից. Չամենն ի *կարդալ* կուտան՝ թէ աղջիկ է և թէ տղայ:

Սեռային փոխանցումների մեջ նկատվում է մի հետաքրքիր իրողություն ևս. փոքր թվով բայեր, որոնք գրաբարում միասեռ են, արդի հայերենում դարձել են կրկնասեռ: Մինչ այժմ քննարկված բայերում կատարված իմաստափոխությունից նշվածը տարբերվում է նրանով, որ այս բայերն այսօր արտահայտում են միանգամայն այլ իմաստ: Ի տարբերություն գրաբարում ունեցած նշանակության՝ այսօր ցույց են տալիս բոլորովին այլ բնույթի գործողություն, որը կարող է պահանջել թե՛ ուղիղ, թե՛ անուղղակի խնդիր լրացումներ. («խաղալ», «սպրել» և այլ բայեր):

Սեռային անցումների մասին խոսելիս պետք է նշել մի փաստ ևս. շատ բայեր ենթարկվել են այս իրողությանը՝ չլինելով կրկնասեռ: Օրինակ «հաւանել» բայը գրաբարում չր է՝ *1. հնազանդվել, 2. համախոհ լինել, 3. ընդունել, 4. իր ճաշակին համապատասխան գտնել*: Արդի հայերենում բայը ներգործական սեռի բայ է. կորցրել է գրաբարյան առաջնային նշանակությունները՝ պահպանելով *իր ճաշակին համապատասխան համարել, ընդունել, համաձայնել* իմաստները (ընդ որում, առաջին նշանակության գործածությունը անահամեմատ բարձր է): Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես սեռի, այնպես էլ իմաստի փոփոխությունը կատարվել է արդեն միջին հայերենում հավնե՞նալ<sup>9</sup>. նր է՝ *հավանել, համաձայնել, ընդունել* իմաստներով:

<sup>9</sup> Ռ.Ղ ա գ ա բ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, ՄՀԲ, հ. Բ, էջ 22:

Նահանջել բայը գրաբարում՝ նր է, իսկ արդի հայերենում՝ չր (չունի գրաբարյան առաջ քաշել նշանակությունը), «դառել» բայը գրաբարում՝ նր, արդի հայերենում՝ չր և այլն): Ինչպես նշել ենք, լեզվի պատմական զարգացման տարբեր շրջաններում կատարված բառիմաստի փոփոխությունների բնույթը վկայում է, որ արդի հայերենը կորցրել է բառերի գրաբարյան շատ անգամ առաջնային նշանակությունները. օրինակ. «գոռալ» բայը գրաբարում նշանակում է *կռվել, կռվի տենչով բռնվել, բարձրաձայն զռչել, գոռալ*: Դժվար չէ նկատել, որ արդի հայերենում կատարվել է իմաստների տեղաշարժ. գրաբարի առաջնային նշանակությունը վերացել է, երկրորդը դարձել է հիմնական և միակ: Այդպես էլ արդի հայերենը չի պահպանել «վատնել» բայի գրաբարյան *մեռնել*, «խոստանալ» բայի *խոստովանել*, «խիզախել» բայի *պարծենալ, մեծ-մեծ խոսել*, «մաշել» բայի *ուտել*, «կարծել» բայի *կասկածել*, «արբել» բայի *լավ թըրջվել* նշանակությունները և այլն:

#### Համառոտագրություններ

1. Ազաթ. - Ազաթանգեղայ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914:
2. Եղ. - Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, 1912, Թիֆլիս :
3. Բուզ. - Փաստասի Բիզանդացոյ Պատմութիւն հայոց, Եր., 1989:
4. ԳՆՍՈ - Գրիգոր Նարեկացի, Մատենանոց տպարան, Եր., 1985:
5. Ֆր. - Ֆրիկ, բանաստեղծություններ, Եր., 1941:
6. ՆՇ - Ներսես Շնորհալի, Յարագս երկնի ու զարդոց նորա, Հանելուկներ, Ողբ Եղեսիայ, Եր., 1968:
7. ՀԳԶ - Հայ դասական քնարերգություն, Եր., 1968 (2 հատոր):
8. ՀՄՊՏ - Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV - XVIII դար) Եր., 1979:
9. ԴՂՎ - Դիվան հայ վիմագրության, Պրակ 4, Եր., 1973:
10. ԿԱ-Կամենեց-Պողոսի քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.), Եր., 1963:

## ЗАЛОГОВЫЕ ПЕРЕХОДЫ ГЛАГОЛОВ В ИСТОРИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

\_\_\_\_ Резюме \_\_\_\_

\_\_\_\_ Г. Закян \_\_\_\_

В статье говорится о залоговых переходах глаголов в историческом развитии армянского языка. Были изучены все три стадии литературного языка. Как показывают факты, армянский язык в своем развитии стремится к упрощению, стараясь избавиться от грамматических изменений, присущих древнеармянскому (грабару). В категории глагола это показано на примере перехода двухзалоговой системы в одну.